

Թիւն էք համարում և հակառակ վարդապետութեան ֆրիստոսի, որոյ հետևողներ էք ձեզ ճանաչում, ձեզ ես մի խրատ, մի խորհուրդ եմ տալիս, մի խնդիր անում—նոյնն, ինչով ես սկսեցի իմ քարոզս, այն է յանուն սիրոյ առ կորնչող մերձաւորս ձեր, դատապարտեցէք, յանդիմանեցէք, չարաբանեցէք անձնասպանութիւնը թէ կատարուելիս թէ մտածման և թէ փորձոյ առարկայ լինելիս, Յիշեցէք, որ մինչև անգամ ամեն բարի դիտաւորութիւն իւր մերձաւորի հոգին փրկելու վերաբերմամբ գին ունի յաչս Աստուծոյ, իսկ ով որ, իբրև բարի և հաւատարիմ ծառայ Աստուծոյ, կազատէ իւր մերձաւորին անձնասպանութիւնից և նրան կռնէ առաքինի կենցաղավարութեան ճանապարհի վերայ, այնպիսին մեծ կրկոչուելի երկնից արքայութիւնում:

(Թարգմ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ:

Ցարական ուսումնարանի երկու լծակները կազմում են՝ իրազնութիւնն*) ու լեզուն: Մենք տեսնք, թէ Բէնը ինչ է վարդապետում իրազնական ուսման մասին. ոչ նուազ հետաքրքրական է իմանալ նորա տեսութիւնը նա և լեզուի ուսումնասիրութեան նկատմամբ, որ և հարկ ենք համարում մեր ընթերցողներին ծանուցանել ընդարձակ քաղաածքներ հանելով նոյն հեղինակի «Մանկավարժութիւնից»:

(*) Անցեալ դեկտեմբեր ամսի «Արարտառում» ծանուցուած էր, թէ «իրազնական դասերը» չարաճակիչ են, որովհետև շարունակութիւնը վերաբերութիւն ունի թէ իրազնական գասերի՞ն եւ թէ լեզուի, ուստի ոյս նոր յօդուածի վերջը մի յանդուած կը կցենք, որով երկու յօդուածները միանգամայն կը լրանան:

Լեզուի ուսումնասիրութեան եղանակները յատուկ առանձնութիւններ ունին: Եւ եթէ մայրենի լեզուն և օտար լեզուները դարձեալ միշտ լեզուներ են, սակայն դոցա հանդամանքները նոյն չեն, ուստի և իւրաքանչիւրը իւր բնութեան համեմատ պէտք է քննուի:

Ձոր օր. հասկանալի է որ մայրենի լեզուի դպրոցական ուսումը մի քանի պայմաններում կարող էր աւելորդ դառնալ: Եթէ մանուկը շրջապատուած լինի այնպիսի հասակաւոր անձինքներով որոնք ուղիղ և լաւ են խօսում, եթէ նա միշտ և անպակաս առիթներ ունենայ ընտիր խօսուածք լսելու, գեղեցիկ, ճարտար և հանձարեղ լեզուն կաթի հետ ի միասին ստանալու, ապա յայտնի է, թէ լոկ միայն նմանութեան բնադրմամբ՝ նորա լեզուի կրթութիւնը ինքնին կարող էր կատարելութեան հասնել: Այնուհետև ուսման գործը միայն այն կը լինէր, որ զգուշացնէ դաւառական դեհիւթիւններից, անճշտութիւններից, առհասարակ տգեղ արտասանութիւններից, Հասարակութեան բարձր դասակարգի զաւակները գրեթէ աւելի այդ միջոցով են զարգանում, իսկ այն ցեղերը, որոնք ամենայն առարկայի և անձի համար սեպհակնացրել են լոկ միայն մի անուն, մի ասութիւն կամ միայն մի դարձուածք, բացէ ի բաց այդ ճանապարհով են աւանդում լեզուն իրանց աճող սերնդեան:

Քանի որ մեր իսկական վիճակը տարբեր է, հարկաւ կարօտութիւն ունինք, որ յատուկ ուսուցում սահմանենք մայրենի լեզուն աւանդելու համար: Սակայն բնաւ չը պէտք է մոռանանք, որ կենդանի լեզուն միայն ուսումնարանի պատերում չի ուսումնասիրվում, այլ անդադար կողմնակի նպաստներով ևս կազդուրվում է: Որքան անհեթեթ բան է, եթէ ուսումնարանում ձանձրալի կերպով կրկնում ենք այն, ինչ որ արդէն տանն է ձեռք բերվում. և աւելի սովորական անպատեհութիւն է, եթէ դպրոցական սուղ ժամանակը լցնում ենք այնպիսի բաներով, որ անշուշտ մի օր ինքնին կը ստացուի կեանքի և աշխարհքի մեծագոյն դպրոցից: Մարդկանց մէջ անցկացրած ամեն մի ժամը առատ առատ մատակարարում է լեզուի ուսում: Ինչ ծանօթութիւն որ ստանում ենք, միշտ համապատասխան լեզուով ենք լսում. ուրեմն առարկաների ուսումը՝ լեզուով արտայայտելու ուսում է դառնում:

Լեզուի ուսուցման առաջին և հիմնական դժուարութիւնը այն է, որ այդ ուսումը երկակողմանի ընութիւն ունի, որ լեզուն ու միտքը իրար հետ կապուած են անբաժան կերպով: Լեզուն ոչինչ է առանց այն իմաստի, որ նա պէտք է արտայայտէ. ուստի և մանկան ուշքը բաժանվում է այդ երկու կողմերը, փոխանակ մէկի վերայ հաստատուելու և միւսը առ նուագ անուշադիր թողնելու: Դժուարութիւնը նորանով աւելի բարդվում է, որ ամենայն միտք հնարաւոր չէ ամենայն կերպ արտայայտել և

այս հանգամանքն էլ ուսուցման ժամանակ ի հաշիւ պէտք է առնուի: Բայց քիչ չեն լեզուի և այնպիսի պարագաներ, որ ամեն տեսակ առարկայի համար նոյն են մնում, զոր օր. բուն քերականական կանոնները և հոետորական արուեստի պայմանները: Ահա սոսկ (զուտ) լեզուի ուսման սահմաններն ու բովանդակութիւնն սքթա են կազմում:

Հարկաւոր է միշտ յիշել, թէ լեզու ուսուցանելը չի նշանակում մատակարարել գիտութիւն, ինչպէս որ են պատմութիւն, աշխարհագրութիւն, բարձր հմտութիւններ և արուեստներ: Լեզու ուսուցանելը նոյնպէս այն տեսակ գործ չէ, ինչպէս որ է վեբմ կամ բանաստեղծական զգացում զարթեցնել, կամ թէ բարոյական և վեհութեան ոգի ազդել: Այսպիսի դէպքերում լեզուն լոկ միայն գործիք է, Երբ որ այս նպատակների համար ենք գործածում լեզուն, մենք իսկապէս սովորեցնում ենք ոչ—լեզու, Թէպէտ ճշմարիտ է, թէ լեզուի ամենայն գործածութիւն անըզպել և կողմնակի կերպով դարձեալ նոյն լեզուի ուսում է դառնում, մանաւանդ որ լեզուի կատարելութեան մեծ մասը այդ ճանապարհով է առաջանում: Սակայն այս ուղղութեամբ ստացած ներգործութիւնը հարկաւոր է ջոկ հանգամանք համարել լեզուի բուն վարժութիւններից:

Միայն լեզուն չէ, որ այսպէս կրկնակի բնութիւն ունի. երբ որ միտքը հրահանգվում է, այն տեղ շատ անգամ է պատահում մի ուսումնական առարկայի երկձողութիւնը: Գիտութեանց մի քանի մասերին յատուկ է այդ հանգամանքը, որ և շատ անգամ անփոյթ թողնելով, հարկաւ հետը պէտք է գործուին աններելի սխալներ: Մենք անդադար պէտք է յիշենք այն հոգեբանական մեծ իրողութիւնը, թէ մարդայն հոգին զբոնիւն առէ մի նորոգողութեամբ լինելու և զննել միայն մի առարկայ: Թէպէտ նա կարող է շատ շուտ փոփոխել իւր մտածութեան առարկաները և արագ արագ անցնել երկու կամ աւելի առարկաների սահմանները, բայց և այնպէս կրթութեան ժամանակ՝ երբ որ զանազան առարկաների տէր պիտի դառնան մանուկները, կամ երբ հարկաւոր է հոգու մէջ բազմաթիւ մանրամասնութիւններ սպաւորել, անհրաժեշտ կարւոր է մանկան ուշադրութիւնը առ ժամանակ դադարեցուցանել միայն մի նիւթի վերայ, հետեւապէս այն առարկաների նկատմամբ, որոնք կրկնակի ուղղութիւն են ստանում, ուշադրութիւնը պէտք է անշուշտ առ ժամանակ այդ երկու ուղղութիւններից մէկի վերայ հանգստանայ, փոխանակ երկուսի մէջ տարուբերուելու:

Լեզուի ուսուցման մեծ մասում կարելի է լիովին իրագործել ջոկ ջոկ ուշադրութեամբ ուսումնասիրելու այս սկզբունքը: Բայց մի քանի դէպքերում այնպէս թափանցուած են իրար մէջ լեզուն և իմաստները, որ անկարելի է նոցա անջատումը իրարից, Ամենայն սրախօսութիւն, վեր-

տառութիւն (համառօտ իմաստալից բանաստեղծութիւն), ձեւաւոր նկարագրութիւն, կամ մեր ջան-գիւլումը այնպէս է կազմուած, որ նոցա միջի դաղափարներն ու բառերը հաւասար չափով գործիքներ են՝ վախճանական միտքն ու խորհուրդը արտայայտելու համար: Միւս կողմից շատ անգամ նիւթական գիտութիւնը՝ բառական կամ լեզուաբանական ծանօթութեան տեղ է երևում: Ի՞նչ է խոսքի—այս հարցմունքը կարծես թէ բառական տարակուսութիւնը լուծելու համար է ձեւացած, բայց իսկապէս պահանջում է մի բնական երևութի մասին տեղեկութիւն:

Լեզուի ուսման յատուկ ընտելութիւնն իւր կատարեալ էութեամբ երեւում է օրոր լեզուների ուսումնասիրութեան մէջ: Այս տեղ յայտնապէս կատարվում է այն գործողութիւնն, որ մի բառ միտ է հեր կցվում է միմյան բառի տեղը (օտար բառը միանում է խօսած լեզուի բառի հետ): Իսկ մայրենի լեզուի ուսումնասիրութեան ժամանակ անհնար է հարցնել ինչ է ինչը երբ է կամ բառի տեղը: Արեւմտեան այդ երկու դէպքերում մտքի մէջ տպաւորելու կամ իւրացնելու օրէնքները նոյն չեն:

Բայց ամենայն դէպքում լեզուի ուսումնասիրութիւնը խիստ մեծ պահանջ է անում հոգևոյ կերպընկալ (յիշողական) զօրութիւնից. և ուրեմն այդ ժամանակ չը պէտք է պահասի այն բոլոր պայմանները՝ օժանդակութիւնը, որոնցով հաստատվում է մտապահութեան զօրութիւնը (մարմնական թարմութիւն՝ սնունդ և հանգիստ առնելուց յետոյ, ուղեղի աշխատութեան տնտեսութիւն, մտքի կենդրոնացում մի բանի վերայ, կամքի զուարթութիւն, աշխատելու յօժարութիւն, սաստի զգուշաւոր գործածութիւն, անդադար կրկնութիւն): Այն բոլոր կապակցութիւնները, որոնք մարդու հոգու մէջ պէտք է հաստատուին, խիստ բազմաթիւ են: Մի քաղաքակրթեալ լեզուի միայն բառերի գումարը՝ հազարներ են, որոնցից շատերը աւելի քան մէկ նշանակութիւն ունին: Սոցա վերայ աւելանում են համաձայնութիւնների, դարձուածքների կամ նախադասութիւնների յատուկ նշանակութիւններն ևս, որոնք նոյնպէս պահանջում են յիշողութեան նոր նոր ջանքեր:

Մի բառ միւսի հետ կապուելու ժամանակ գործում է հոգու սոսկ լեզուաբանական կամ սոսկ բառական մտապահութեան զօրութիւնը: Այդ գործը գրաւոր լեզուի նկատմամբ կատարվում է աչքի մէջ իսկ բանաւոր լեզուի վերաբերութեամբ՝ ականջի մէջ: Վերջինն օժանդակող է դառնում ձայնը, իսկ աչքին՝ ձեռքը: Միայն բառական յիշողութեան համար՝ այսքան գործարանների վաստակ—շատ բան է: Լեզուի դժուարութիւնը այդ տեղից է ծագում: Այդ միջոցներին հոգին զբաղ-

ուած է լինում ամենաքիչ հրապոյր ունեցող բաներով: մայրենի լեզուի բառերի կցորդութիւնը համապատասխան ուսաց, ֆրանսիացոց կամ մեռեալ լեզուների բառերի հետ՝ չի զարթեցնում մարդու զգացմանց ամենազրաւիչ շարժումները. այդ տաժանելի ջանքերին չեն օժանդակում զօրեղագոյն և բարձրագոյն հետաքրքրութիւնները, ուստի և ստացածները դժուարաւ են սպաւորվում մտքի մէջ:

Բայց լեզուի կատարելութիւնը շատ է արագանում, եթէ անուն տալը իսկոյն և եթէ և անմիջապէս միանում է իրական առարկաների տպաւորութեան հետ կամ նոցա նշանակութեանց հետ: Մենք այսպիսի դրութեան մէջ ենք գտնվում մայրենի լեզուն ուսանելիս. այլ է բառը քուէ հետ կցել, և այլ է բառը «ուրիշ» հետ կապել: Յանկարծակի մեզ հանդիպում է մի առարկայ՝ կրակ, դնտակ կամ կատու, որ իսկոյն գրաւում է մեր ուշքը, Եւ եթէ անմիջապէս հետը լսում ենք նաև նորա անունը, ամենայն արագութեամբ վերջինը ձուլվում է առարկայի հետ և այդպէս պահ է մնում մեր մտքի մէջ: Որքան որ մի առարկայ անակընկալ կերպով է ազդում զարմացումն, այնքան աւելի շուտ տպաւորվում է նորա անունը: Եթէ փայլակը, յանկարծակի շշուկը, արագ շարժումը, ձեղքի ձայնը տեղնուտեղն իւր անունով կոչուի, նա հազիւ թէ այնուհետև յիշողութիւնից ջնջուի:

Կեանքի տպաւորութեանց հետ անուանց յաջողութեամբ կապակցութիւնը խիստ զօրաւոր նեցուկ է ստանում մի գրգռման արձագանքով, որ իւրաքանչիւր նշանաւոր ազդեցութիւն կրելուց յետոյ՝ մեր մէջ շարունակ մնում է: Հէնց որ մենք դրսից որ և է ներգործութիւն ենք ստանում, ազդ կամ գրգիռ ենք առնում, կամ եթէ մեր ուշադրութիւնը հետաքրքրութեամբ դառնում է մի բանի վերայ, մենք ակամայ մի բացականչութիւն ենք արձակում, որպէս զի ելք տանք մեր ներքին յուզման: Մանուկը շատ վաղ է սկսում յայնել այն բուռն ձգտումը, որ իւր ուշադրութիւնը գրաւող իւրաքանչիւր առարկայի (կրակի կամ կատուի) անունը՝ աղաղակելով ծանուցանէ, և այս հանգամանքը խիստ օգտում է նորան, որպէս զի աւելի և աւելի լեզուի տէր դառնայ:

Եթէ մի օտար լեզու ենք սովորում այն երկրում, ուր որ նա խօսակցական և գործածական է, այն ժամանակ աւելի զգում ենք այն մեծ տարբերութիւնը, թէ արդեօք նշանակող ձայնը առարկայի հետ է կապվում կամ միայն բառն է կցվում բառի հետ: Ֆրանսիացոց քաղաքում մենք տեսնում ենք իւրաքանչիւր փողոցի անկիւնում ԴՍՅ բառը գրուած, խանութների ապակիների յետևից՝ ապրանքները իրանց անուններով դասաւորուած: Իսկ եթէ մի անհարթ ճանապարհի վերայ հանրակառքով անցնենք, ամեն մի զգալի ցնցում ստանալուց յետոյ մեր ճանապար-

Տորդակիցների բերանից կը լսենք՝ secousse, և անշուշտ բառական է մի այսպիսի բացականչութիւն, որպէս զի անմիջապէս մեր զգացած վիճակի անունը՝ ընդ միշտ անմոռաց պահպանենք. մինչդեռ եթէ բառարանով և տանը սովորէինք secousse և «ցնցում» բառերի կապակցութիւնը, մենք կը ստիպուէինք այդ աշխատութիւնը շատ անգամ կրկնել, մինչև որ կարողանայինք յաջողութիւն ստանալ:

Կարծես թէ մի և նոյն հետեանք պէտք է առաջանար, եթէ օտար բառի դիմաց՝ մեր խօսած լեզուի բառը արտասանենք, որովհետև վերջին բառը արտասանելիս՝ ո՛չ ապաքէն մեր մտքերը ինքնին պէտք է զարթեցնեն բառի իսկական նշանակութիւնը. Այսինքն եթէ secousse բառը մեկնում ենք հայոց «ցնցում» բառով, երևիթէ առաջինը պէտք է միանայ «ցնցում» բառի նշանակութեան հետ, և ուրեմն ֆրանսիացոց բառը ուղղակի այն իսկական վիճակը պէտք է կենդանացնէ մեր մէջ, ինչ որ նա նշանակում է: Բայց ամսոս որ իրականութեան մէջ այդ արդիւնքը շատ դանդաղ և թոյլ կերպով է կատարւում, երբ որ բառը միայն բառի հետ է կցորդւում: Գործը աւելի լաւ է յաջողւում, եթէ չենք բառականանում ընդ միայն ձայնական արտասանութեամբ, այլ եթէ արտասանած բառի հետ փոքր ինչ խորհել ենք տալիս և նորա իսկական նշանակութիւնը, կամ եթէ այնպիսի բացատրութիւններ ենք տալիս, որոնք իսկութիւնը հոգու առաջ կենդանի կերպով պատկերացնում և նկարագրում են, մենք զօր օր կ'ստանք թէ «secousse — նշանակում է այն ցնցումը կամ հարուածը, որ կառքի մէջ նստած մարդիկ անդադար ստանում են ճանապարհի անհարթութիւնից» և այլն:

Այս մի օրինակը արդէն ցոյց է տալիս, թէ լեզուի ուսման յառաջադիմութիւնը արագացնելու համար՝ որքան կարևոր է նշանակութիւնների հասկանալը. որով ասել ենք ուզում, թէ երբեք տեղեկութիւնը միշտ առաջ պէտք է տալ, քան անուններ սովորեցնել: Եթէ մենք մի գրուածք ենք կարդում լեզու սովորելու մտքով (մեր գրաբառը, ուսաց, ֆրանսիացւոց լեզուն), ապա պէտք է ուսումնասիրէինք գրուածքի նիւթը. Եզնիկի «Եղծ աղանդոց» կարդալուց առաջ՝ պէտք է լաւ հասկանանք աղանդների վարդապետութիւնները: Սորա առաւելութիւնը այն կը լինի, որ աշակերտը աւելի անշիտթ կերպով կ'ուսումնասիրէ այն անծանօթ բառերն ու լեզուի ձևերը, որոնք գործ են գրուած նիւթի նկարագրութեան համար: Որովհետև եթէ նիւթի դժուարութիւններ կան, այն մասին կարդալն էլ անօգուտ է:

Ահա այս է լեզուներ վաղօրօք ուսուցանելու թոյլ կողմը: Մատաղ հասակում թէպէտ յիշողութեան թարմութիւնն ու զօրութիւնը մեծ է, սակայն բարձր ծանօթութիւններ ձեռք բերելու համար պատշաճաւոր

ըմբռնողական կարողութիւնը՝ տակաւին չէ զարգացած այդ ժամանակ, Իսկ եթէ աշակերտը լեզու է սովորում դեռ ևս առարկաները լաւ չը հասկացած, ամենայլաւ յիշողութիւնն էլ չի օգնի, որպէս զի ցանածը արմատ բռնէ, Շատ անգամ դժուարութիւնները աննշմարելի են լինում և ուսման խտրուտ լինիլը ծածուկ է մնում, որովհետեւ նորագոյն մանկավարժական եղանակներով ուսուցիչները սովորեւ են ակորժելի ձեւերով պատմել, ամեն բանի մէջ և ամեն ժամանակ օգնել և օժանդակ լինել, Սակայն որովհետեւ ցանկալի է, որ մի օտար լեզուի արտասանութիւնը վաղ սկսուի, որով փոքր ինչ լեզուի ծանօթութիւնն էլ հարկաւոր կը լինի, ապա ուրեմն կարելի է այդ ուսումը մանկութեան ժամանակ ձեռնարկել, բայց այն չափով միայն, որքան որ մանուկը «բէ» ծանօթութիւններ ունի, և ոչ աւելի, գիտնական տեղեկութիւնները պէտք է մայրենի լեզուով մատակարարուին, իսկ օտար լեզուները այդ տեղեկութեանց չափով պէտք է առաջանան:

Մենք կը տեսնենք, թէ մայրենի լեզուի մէջ բաւական չափով պատահում են լեզուական ուսման և իրական տեղեկութեանց ուսման կապակցութեան անխուսափելի վտանգները, թէպէտ մասամբ մեղմացած. բայց կարիք չը կայ, որ այդքանի վերայ նոր մշաններ ևս աւելանան օտար լեզուների ուսման պատճառով*): Այս տեղ դժուար չի լինի միշտ իրական ծանօթութիւնը առաջ տանել զուտ լեզուական ուսումից:

Անօգուտ չէ ընդհանրապէս դադարիար կազմել, թէ որոնք են բուն լեզուական խնդիրները, այսինքն բառը բառի հետ կցորդութիւնը առանց նոցա իմաստի վերայ կանգ առնելու, Թէպէտ խօսելու կարողութիւնը մեծաւ մասամբ կախուած է բառը համապատասխան իրի, վիճակների կամ նոցա նշանակութիւնների հետ կապակցելուց, բայց և այնպէս քիչ չեն և այնպիսի դէպքեր, ուր որ սոսկ բառը բառի հետ է շղթայվում, Աւեր առնենք զոր օր. քերականութեան մանրամասնութիւնները, հօլովները և խոնարհումները, և առհասարակ այդ ձիւղին վերաբերեալ կանոնների ու

(*) Թէ ինչպէս պէտք է ուսուցանուի մեր դպրոցներում բուսերէն լեզուն, այդ մասին մենք արդէն հրատարակած ունինք առանձին դասագիրք եւ մանրամասն բացատրութիւն, Ով որ հետաքրքրվում է օտար լեզուի դասաւանդութեան խնդրով, նո շատ օգտաւէտ համեմատութիւններ կարող է անել, եթէ կարդայ Вуслаевъ - Ի յօդուածը նոյն առարկայի մասին «Пантеонъ Литературы» ամսագրի անցեալ տարուայ վերջին համարներում:

սահմանների տախտակները, Այսպէս էլ նախադասութեանց այն ձևերը, որոնք որ մանկական լեզուի արտայայտութիւններ են կազմում, և աւելի զարգացած արուեստական ձևերը, որ բարձր հասակում գրեթէ մեքենական վարժութեամբ ենք գործածում, են լոկ միայն բառական զուգորդութիւններ: Նոյնը պէտք է ասենք և այն ասացուածների մասին, որ մենք մեր մտքում տպաւորում ենք դեռ ևս այն հասակում, երբ որ նոցա իսկական նշանակութիւնը հասկանալու համար հոգս չենք քաշում և անփոյթ ենք. այդպէս են մանաւանդ այն դարձուածքները, որոնք մեզ համար արժէք ունին և մեր յիշողութեան մէջ դրոշմվում են միայն իրանց բառական քաղցրաձայնութեան կամ սուր բառախաղի պատճառով: Այն, ինչ որ մենք սովորում ենք արտայայտել, մեր յիշողութեան մէջ հաստատվում է մասամբ իրի ներքին կապերով, մասամբ գործադրած բառերի կարգով (վերջին դէպքում բառերն են շղթայանում և ոչ իմաստները): Բացի դրանից, նոյն իսկ լեզուական նոյնանիշները մեծ մասով իրար հետ կապվում և խումբեր են կազմում մեր բառական յիշողութեամբ. և այս երևում է ոչ միայն անուանների նկատմամբ, այլ մի և նոյն միտք արտայայտելու համար ձևացած՝ նոյնանիշ դարձուածքների և պէսպէս արտայայտութեան եղանակների վերայ, նմանապէս այս կարգին է պատկանում մի օտար լեզուի ուսման այն մասը, որը որ այդ լեզուի անուանց հետ մայրենի լեզուի համանիշների կցորդութեամբ է կազմվում: Իսկ լեզուների ուսմանց ծայրագոյն սահմանն է, երբ որ լեզուագիտութիւնը՝ բարձր ուսումնական նպատակներով՝ հետախուզութիւններ է անում:

Այսքան բազմաթիւ զուտ բառական զուգորդութիւնները տաժանելի աշխատութիւն են կազմում, և դուցէ միայն դիպուածով երբեմնակի ախորժելի լինին: Ո՞ւր համար զուարճալի է եղել զարտուղի բայերը և նոցա անկանոնութիւնները անգիր սերտելու: Ինչպէս գիտութեանց ամենայն չոր ու ցամաք բաժինները, սա էլ պահանջում է մեծամեծ արուեստական նպաստներ գործին փոքր ինչ յաջող ընթացք տալու համար. այդ ժամանակ մարդու ամենաբարձր կերպնկալ զօրութիւնը պիտի շարժուի, քայց այնպիսի աշխատութեամբ, որ չէ քաղցր և ոչ էլ սէր է ազդում:

Երբ ուսումնասիրելու տարերքը բազմաթիւ են և գրաւիչ դառնալու յատկութիւն չունին, անշուշտ հարկաւոր է՝ ուսման ոյժերը տնտեսելու համար՝ լաւագոյն համարուած սկզբունքներով վարուել: Ամբողջ աշխատութիւնը պէտք է՝ իւրաքանչիւր օրուայ համեմատ՝ յարմար բաժիններէ տրոհուի. կարևոր ժամանակը, ջանքը, ուշադրութիւնը պէտք է այդ գործին նուիրուի օրուայ այն միջոցներէն, երբ որ յիշողական զօրութիւնը ունի:

Ինչ է (առաւօտեան, հանդիստ առնելուց և ոյժերը վերանորոգելուց յետոյ) և ոչ թէ մի քանի դասերից և առ հասարակ յոգնելուց յետոյ)։ Սերտելու դասը պէտք է ուսուցչի առջը խնամով կրկնուի և նորա հաւանութիւնը ստանայ, Կանխաւ սովորած դասերը խառնուի պէտք է վերջին քննութեան ենթարկուին. աւելի թոյլերը և փոքրիկները միշտ պէտք է իրարմէն և իրարմէն։ Միայն այսպէս կը յաղթուի այն չոր ու ցամաք դասը, որ դժուարակիր է թուում մանուկին և որ արդարև լիքն է անհրապոյր մանրամասնութիւններով։

Մասնաւորապէս բառեր սովորելու խնդրին գալով, ուսուցիչը անօգուտ էր պէտք է համարէ մի քանի օժանդակ հնարներ, որոնք դիւրացնում են ուսումը. Խօսելու ժամանակ նորա արտասանութիւնը պէտք է լինի պարզ, որոշ, և մինչև անգամ ախորժ. տպագրած կամ գրած թղթի մէջ տառերը պէտք է լինին զգալի և լաւ վերծանելի, իսկ աղիւսակները, տախտակները, ցանկերը՝ համաչափութեամբ դասաւորած։ Ոչ նուազ օգտաւէտ է, որ նշանաւոր աղիւսակները, հոլովման և խոնարհման տախտակները, բառերի ցուցակները՝ զգուշութեամբ և բազմիցս արտագրուին։ Ուշադրութիւնը լարելու համար դա լաւ միջոց է, եթէ առ հասարակ ընդօրինակութեան արուեստը փոքր ինչ հաստատուել է և այլ ևս մեքենայական ձևով չի կատարվում։

Բառական յիշողութեան համար ուրիշ միջոցներ էլ կան։ Յայտնի է, որ լեզուի մանրամասնութեանց բեռը թեթեւանում է, եթէ իրար հետ կապակցելու բառերի մէջ որ և է նմանութիւն կարելի է ցոյց տալ («բարի» «բարբ», «բարոյականութիւն», կամ զանազան լեզուների նոյնարմատ բառեր՝ «բար» — бр — око, оца, դիք — dens, տիւ — день)։ Այսպիսի նմանութիւնները երբեմն յայտնի երևում են, միւսները մասնաւոր փոփոխութիւններից յետոյ հաւանական են դառնում։ Այս աւելի լեզուաբանական օժանդակութիւն էր։

Իսկական յիշողական արուեստը այլ նպաստներով է հաստատվում։ Հին ժամանակներից յայտնի է*) թէ ոտանաւորի ձևով դասաւորած բառերը աւելի լաւ են տպաւորվում մտքի մէջ, քան խառն ի խուռն կուտակուած։ Ձոր օր. փոխանակ խառն կերպով շարելու ութերորդ և իններորդ հոլովման տակ գնացող բառերը, նոցա կարելի է մի այսպիսի ձև տալ.

Ութերորդ տարր,
ոսկր, համր,

(*) Այլոց շնորհէ բանտ տաղի,

Ձի եւ այնու միւսքե բառի,

ատուղ, աղբիւր,
կայսր, ալիւր:

Իննէրորդ, անուանք՝
Փիլիպպոս, ՍաՀակ,
Գալիլեա, Հոռով—Հայկ,
և Տրդատ, Տիրեր,
Տիրեր,
Հեղինէ, Յովսէփ, Յակոբ,
Եսայի, Կրեաէ, Մեսրոպ:

Արդէն այդքանով էլ բաւական յիշողական ոյժ կը խնայուի: Նոյնպէս արդիւնաւոր ներգործութիւն կունենայ եթէ բառերից կազմուի մի իմաստ ունեցող նախադասութիւն: Իսկ աւելի լաւագոյն է՝ եթէ իմաստը որ և է կողմից հետաքրքրական ևս է: Զոր օր՝ նոյնաշան ո՞հ, վե՛ր, երկե՛ղ, ուրու՞նի, զբո՛ւրեան, սառնո՞ւն, բառերից կարող է կարճ ասութիւն ձևանալ, ուր այդ բառերից իւրաքանչիւրը համապատասխան բացատրութիւն կը ստանայ՝ և որոշ միւսներից: Մանուկներին զուարճութիւն տալու համար և ուսման տաժանելի աշխատութիւնը մասամբ իւրիք թեթեւացնելու համար՝ Հնորհային շատ անգամ գործ է ածել յիշողական այդ հնարը:

ԱՅՔՆ առաջին ըզքեղ, տղայ,
Հանէ յիմաստ գերակայ,
Երրորդութեան մերձակայ
Լինիս երիւք ստեղամբ նորա:

Այբուբենական կարգով դասաւորութեամբ բառերի շարքը հետ է պահ-վում մտքի մէջ. փոխանակ ասելու՝ սեռական խնդրով նախադրութիւններ են ընդ, ուր, զքրէն, վան, յետ, ուրուն, ուր, օրնալի աւելի լաւ է այսպէս դասաւորել նոյն բառերը (ա՛, զ՛, ը՛, յ՛, պ՛, վ՛):

առ — առանց,
զօրէն — օրինակ,
ընդ,
յետ,
պէս,
վասն:

Այսպէս էլ մեր հին ոյժ — յէ — ճէ — ուն ամենագեղեցիկ հնար է հայ-կական թուանշանները սովորելու համար.
 ո՛ յ ճ ո — մի միւսուր, մի տասնուոր, մի հարիւրաւոր, մի հազարաւոր.
 բ ի յ ո — 2 » 2 » 2 » 2 » .
 գ լ յ լ — 3 » 3 » 3 » 3 » .
 և այլն:

Որպէս զի մի բառ միւսի հետ յիշողութեան մէջ պինդ կապուի, հարկաւոր է մի առ ժամանակ ուշադրութիւնը միմիայն այդ երկու բառերի վերայ հանգստացնել: Այս նպատակին կարելի է զանազան ճանապարհներով հասնել:

Բառարանի մէջ բառեր փնտռելը ամէնից աւելի սովորական եղանակն է՝ ուշադրութիւնը զատ զատ բառերի վերայ դարձնելու համար: Մտտաղ հասակի առոյգ յիշողութեան համար գրեթէ միշտ բաւական է դառնում միայն մի անգամ բառգիրք բանալը, ենթագրելով թէ բառը շատ շուտ կրկին պատահում է: Մի ուրիշ եղանակը այն է, որ ուսուցիչը մի նախագասութիւն թարգմանելիս՝ բոլոր բառերը մեծ զգուշութեամբ և որոշակի արտասանէ և ուրեմն ուշադրութիւնը հարկաւոր տեղերում լաւ կենդրոնացնէ: Աւելի լաւագոյն են այնպիսի վարժութիւններ, որոնցից իւրաքանչիւրը միայն երկու կամ երեք նոր բառ է ամփոփում, և ոչ աւելի:

Մեզանում սովորութիւն է՝ լեզուի ուսուցումը աւելի ուշիւրէ աշխատութիւն դարձնել, ուր նա բառգրքի օգնութեամբ պէտք է փորձէ թարգմանելու դասի նշանակութիւնը գտնել, և ապա թէ, ուսուցչին համար տալու ժամանակ, ուղղէ և աւելի լաւ տպաւորէ մտքի մէջ: Մի բանաւոր պատճառ չը կայ, որ արգելուի դորա հետ ի միասին և միւս եղանակի գործածութիւնը. այն է, որ նախ և առաջ խոսքը մի հատուած լինիլին բացատրէ և քաջալերէ աշակերտին, որ նա հետեւեալ օրը վերստին թարգմանէ յիշողաբար, կամ գուցէ և բառգրքի օգնութեամբ, եթէ մի մասնաւոր բան մոռացած լինի: Դասի ամբողջութիւնը կարելի է երկու մասի բաժանել. մէկը պէտք է պատրաստել այդ կերպով, իսկ միւս մասը՝ անցնել հին եղանակով: Երկրաչափութիւնը և առ հասարակ գիտութիւնները կարող է պատմելով ենք ուսուցանում, և իրաւամբ, բայց սոսկ յիշողական դասերումն էլ այդ ձևը անօգուտ չէ:

Վերի ասածները նշանակութիւն ունին տեսակ լեզունների համար, ի նկատի առնելով աւելի նոցա ընդհանուր հանգամանքները: Այժմ մասնաւորեմք խնդիրը մայրենի լեզուի վերաբերութեամբ:

Մայրենի լեզուի ուսման ամէն աստիճաններում միանում են սոսկ բաւական վարժութիւնները՝ իրագիտական տեղեկութիւններ հաղորդելու հետ: Այս բանից ամէնից աւելի գերծ է մնում քերականութեան ուսումը, որը որ հէնց այս պատճառով էլ չենք կարողանայ շատ վաղ ուսուցանել:

Այն մանուկը, որ զանազան ուղիների ծանօթութիւն է ստանում շատ հեշտ կերպով է սովորում անունները, որովհետեւ նորա մտքի մէջ արա-

գուլթեամբ զուգորդվում են իրն ու իրի անուանական ձայնը: Եթէ առարկան լիովին ըմբռնելի է եղել և միւս առարկաներից մտքի մէջ որոշուել է նորա անունը շատ դիւրին կերպով է տպաւորվում: Որքան որ այն առարկան հետաքրքրական է, որքան որ գրաւում ու լարում է մանկան ուշքը, այնքան նորա անունը աւելի եռանդով պահվում է մտքի մէջ: Մարդս իւր ամբողջ կեանքի ընթացքում անդադար աշխատում է իմանալ այն անձինքներին, երևոյթներին, վայրերին, հասգամանքների, վիճակների անունները, որոնք որ գրաւում են նորա ուշքն ու միտքը: Իսկ եթէ շատ թոյլ կերպով է հրապուրում մեզ մի առարկայ, կամ եթէ դա այնքան նշմարելի չէ, միւս առարկաների միջից լաւ չի որոշվում, մեզ էլ չի հետաքրքրում ոչ դա ինքը և ոչ դորա անունը: Ուրեմն ինչ բան որ անուանել տալ ենք ուզում, բաւական չէ, որ սոսկ անունը յիշուի, այլ պէտք է աշխատենք, որ համապատասխան իրը նախ հարկաւոր Կոմունիստական դործէ:

Քանի որ աւելի խորը քննենք լեզուի սկզբնական ուսման էութիւնը, մենք միշտ կը տեսնենք, թէ դա իսկապէս է նոյն իրագիտական ուսումն, տեղեկութիւններ աւանդելու ուսումն, բայց աւելի դժուարութիւններով բարդուած: Մանուկը շատ շուտ հասնում է այն վիճակին, ուր հարկադրովում է կապով խօսակցութիւններ հասկանալ, որոնցից շատ մասը տակաւին վում է կապով խօսակցութիւններ հասկանալ, որոնցից շատ մասը տակաւին աննշանակ բաներ են նորա համար: Իսկ որպէս զի և այդպիսի աննշան բաները ըմբռնելի կացուցանենք, մենք պէտք է ամէնից առաջ մանկան զգայութիւնների մէջ տպաւորենք այն առարկաները, որոնք մինչև այսօր իսկապէս անծանօթ են մնացել նորան: Մենք պէտք է մի իրագիտական դաս տանք և նոյնը լրացնենք մի լեզուագիտական դասով, որոնցից առաջինը անշուշտ աւելի դժուար է, քան երկրորդը: Եւ յիշուի, եթէ առաջինը կատարեալ արդեամբ պսակուի, երկրորդը գրեթէ ամենաչնչին աշխատութեամբ կը վերջանայ: Թող ուսուցիչը ամենայն վարպետութեամբ յաղթէ իրագիտական ուսման դժուարութիւնները, այն ժամանակ հարկաւորութիւն չի ունենայ, որ անունները հաստատ կերպով սովորեցնելու մըտք՝ արտաքոյ կարգի ջանքեր թափէ կամ արուեստական միջոցներ հնարէ: Մատաղ հասակի մէջ նոր արթնած ընդունակութիւնները՝ աւելի կորովութեամբ անուններ են սովորում, եթէ իրերը արդէն հասկանալի են դարձել, քան կարողանում են նոյն իսկ գաղափարներ կազմել: Իսկական դժուարութիւնը վերջիններն են կազմում:

Ուրեմն լեզուի ուսուցման յաջողութեան խնդիրը բացէ ի բաց կատարում ունի իրազնական դասերի յաջող պայմաններից կամ սկզբնական տեղեկութիւններ հարողեցու եղանակից: Առաջին հոգսը այն պէտք է լինի, որ թէ խօսած լեզուն և թէ գրքի լեզուն յարմարութիւն ունենան, առանց մեծ աշխատանքի, այնպիսի առարկաներով զբաղեցնել մանկան միտ-

Քը՝ որոնք սովորելու և բացատրելու արժանի բաներ են, Յայտնի է, որ մանուկին մի իրողութեան մասին ծանօթութիւն տալու համար՝ ամենալաւ միջոցը այն է, որ այդ բանը նորան պատահի իրականապէս. զոր օր՝ հէնց որ նա Արուսեակը տեսնէ՝ անմիջապէս այդ առթոյլ էլ մի տեղեկութիւն քտանայ, Բայց ուսման հանգամանքները այլապէս են կարգաւորուած: այն տեղ բանաւոր կերպով պատմելիս և գրքեր կարդալիս այնպիսի առարկաների մասին խօսք է լինում, որոնք խիստութեամբ չեն ցոյց տրվում և շատ անգամ անկարելի ևս է ցոյց տալ: Ահա բառեր բացատրելու ծանր պաշտօն*):

Այսպիսի հատուկոր իրագիտական ծանօթութիւններ ստանալու ժամանակ՝ մանկան քառուկան յիշողութիւնը կարող է հետզհետէ այնպէս տիրանալ լեզուին, որ երբեմն բնաւ չըմբռնէ բառերի իմաստը, Բառերի համար յիշողութիւնը աւելի առաջ է զօրանում, քան վերացական գաղափարներ կազմելու կարողութիւնը, ուստի և մեր մտքի մէջ կանխապէս շատ բան է տեղաւորվում, որոնց իմաստը տակաւին լաւ չենք ըմբռնել: Մինչև իսկ հասակաւորները, եթէ լաւ յիշողութիւն ունին բառերի համար, այնպիսի բաներ են մտքի մէջ պահում, որոնց համար որ աւելի հարկաւոր էր ներքին իմաստի ըմբռնումն, բանաւոր որոճումն, ապացուցի հասողութիւն, բայց նոքա այդ բոլորի պէտք չեն զգում. նոքա զոր օր՝ երկրաչափական խնդիրը սովորած կարգով լուծում են, բայց բանի զօրութիւնը չեն իմանում. նոքա գրքեր են կարդում, իմաստի կէսը քամուն տալով: Մանկական հասակում պէտք է օգուտ քաղել մտքի այդ բառական զօրութիւնից, որպէս զի կանխաւ տպաւորուին այնպիսի ստացումներ, որոնք հասուն ժամանակ դժուարաւ են ձեռք բերվում: Այն սկզբունքները, կանոնները, վարդապետութիւնները, բանաձևերը, սահմանները, որոնք խիստ կարևոր են համարվում յիշողութեան մէջ անկորուստ դրոշմելու համար, կարելի է փոքր ինչ առաջ աւանդել, քան նոցա իմաստը հնար լինի կատարելապէս ըմբռնել տալ: Բայց ի հարկէ այս ընդունակութիւնը ի չար չըպէտք է գործածուի. նախ և առաջ ինքը յիշողութիւնը կը յամառի և ոչինչ չի ընդունի, ինչ որ մտքի համար ոչ մի հրապոյր չի ունեցել. դրաւիչ պէտք է

(*) Իրազննական դասերի ժամանակ պատահող բառերի բացատրութիւնները՝ ուսուցչի աշխատութեանց մեծ մասն է կազմում, եւ որժէ որ նա քաջ ծանօթ լինի այն ամենալաւ եղանակների հետ, որոնցով որ նա արդիւնաւոր կերպով կարող է առաջ նորոգուիլ, Այդ տեղ կրկնվում են դարձեալ իրազննական դասերի կանոնները, բայց ի հարկէ յատուկ կերպով, ինչ որ այժմ ընդհանրապէս կատուի, յաւելուածի մէջ ի մի ամփոփուած կը յիշեցնենք մի քանի կարգի օրինակներով, ուր կը տեսնենք եւ այն մանր վզուշնութիւնները, որոնք հարկաւոր են իրազննական դասերը եւ լեզու աւանդելու ժամանակ գործ դնել:

լինի կամ բառերի ձևը՝ դարձուածքը՝ կամ բովանդակութիւնը՝ մի խօսքով մի զգացմունք պէտք է շարժուի, ապա թէ ոչ անօրուտ է կատարեալ կերպով հասկացնելուց առաջ՝ մի բան աւանդել յիշողութեան, Կարելի է մի ուսումնական բանաձև արտայայտել փոքր ինչ ճոռոմ և վերամբարձ բառերով՝ որոնք ձայնական տպաւորութիւն կը գործեն, թէպէտ և անկատար կը լինի նոցա իմաստի ըմբռնումը, Եթէ առարկան զգացմունք և հաճոյք զարթեցնէ՝ այն ժամանակ իմաստի թոյլ աղօտը ևս բաւական կը լինի՝ որ ամբացնէ անհասկացած ամբողջութիւնը մտքի մէջ:

Զգալի հակադրութիւնները դիւրաւ տպաւորվում են յիշողութեան մէջ առաջ, քան իրանց իմաստով լիովին պարզուելու: «Գիծն է երկարութիւն առանց լայնութեան» նախադասութիւնը շատ մոլթն է իւր իմաստով, բայց յիշողութիւնը չի դժուարանում պահել: Այսպէս էլ «բոլոր հեղուկները ձգտում են դտնել իրանց մակերևութի գուրակչուութիւնը» և կարճ ասացուած է և կենդանի նկարագիր է, ուստի և միայն յիշողական զօրութեամբ՝ ընդհանուր մտաւոր պաշարի մէջ մուտք կը գտնէ: Յաճախակի լսած առակաւոր խօսքերը աւելի առաջ են տպաւորվում մեր մտքի մէջ, քան կարողանում ենք նոցա բուն իմաստը որոճալ: Մի խօսքով մանկան ոգին կարողանում է ժամանակից առաջ մասամբ ըմբռնել այնպիսի խօսքեր, որոնք իրանց հրաշալի ազդեցութեամբ յետոյ դրդում են նորան միշտ արթուն լինել, որպէս զի լաւ դիտէ այն յաջողակ դէպքերը, երբ որ նոյն խօսքերը կրկին գործ դրուած կը լսէ, բայց իրանց բուն նշանակութեամբ առաջուանից աւելի պարզուած և զգալի դարձած: Մանուկը կարող է մի առ ժամանակ ծանօթ լինել «լոյս» բառի հետ, առաջ քան նորա նշանակութիւնը ստուգիւ իմանալու: Այնուհետև նա իւր մտածողութեան տալիս է մի կատարեալ մակածական ուղղութիւն, մինչև որ իրան շրջապատող հանդամանքներից և դէպքերից վերջապէս եզրակացնում է բառի իսկական նշանակութիւնը: Առաջ նա կիսատ կերպով և վայրիվերոյ է ըմբռնում «բոլորակ», «ծանր», «տաքութիւն», «շարժում» բառերի նշանակութիւնը, բայց յետոյ վարժվում է այդ գաղափարները ամենայն ճշգրութեամբ ընդհանրացնել, որպէս մի մտածող տրամաբան: